

ՊԵՏՐՈՍ Ա.Դ.Ա.Մ.Ե.Ա.Ն

ՀԱՅ ՀԻՉԱԿԱՒՈՐ ԴԵՐԱՍԱԱՆ

ուսաց լրագիրք և օրագիրք  
1883էն սկսեալ, իրենց թեր-  
թերուն միջոցաւ, աննախանձ  
հոչակեցին հայ նշանաւոր հան-  
ճարը, իրենց մայրագաղաքաց թա-  
տերական բեմերուն վրայ տեսնալով  
Պ. Ադամեանը՝ եւրոպացի անմահանուն  
հեղինակաց ողբերգութեանց մեծամեծ  
գերերը ձևացընելով Օրագրաց շատե-  
րը՝ նոյն իսկ գերասանին վայելաղէմ  
պատկերը տափելով իրենց թերթերուն  
մէջ, համահաւասար և համապատի-  
կը գտնային զինքը եւրոպացի հոչակ-  
անուն գերասանից: Ռուս թերթերուն  
տուած զրուատիկը մեր հայ գերասա-  
նին, ըստ իմ կարծեաց, մեծ յարգ  
պէտք է ունենայ ազգայնոց դիմաց,  
վասն զի Ռուսաստան փող չի խնայել  
անուանի գերասաններ և գերասանու-  
հիք իւր թատերաց վրայ հրաւիրելու՝  
աշխարհիս ամէն կողմէն, որով թատե-  
րացիտաց կամ թատերասիրաց ճաշակը  
նրբացած է, և նոցա քննադատական  
զրոյցք, յայսմ մասին, մեծ արժէք ու-  
նին արուեստին գիտնոց առջև: Միքը  
թէոդասիացիքս կարգալով ռուս թեր-  
թերուն առատ գովասանութիւնքը առ  
հայ հանճարը և կանխաւ գիտնալով  
քննուաց անաշառ գատողութիւնները  
գոհութեամբ սրտի կը զմայէինք, փա-  
փաքելով օր մի տեսնել զիդամեան  
թատերաբեմին վրայ, թէոդոսիացւոցս  
փափաքը յանակնկալ ժամու լիապէս  
փարձատրեց Պ. Ադամեան այս տարի (1886) ամբողջ մի ամիս քաղաքիս  
մէջ անցընելով. որ եկած էր իւր ակա-  
րացեալ լիզերը ծովային բաղանեզք  
հաստատելու համար: Թէպէտ և քաղա-  
քիս արևելեան ծայրը, պարտիզին մէջ

շինուած փայտակերտ թատրոնը՝ մեծ  
գերասանին վայելական ասպարէզչէր՝  
իւր հանճարը ցոյց տալու, այլ նա զի-  
շանելով ազգայնոց, նոյն և բազմաթիւ  
օտարաց ինդիքներուն, տուաւ մի  
քանի ներկայացմունք: Ես բաղդ ունե-  
ցայ ներկայ գ.անուիլ մեծանուն Շէ-  
քասիիրի երկու աննման ողբերգու-  
թեանց, այն է Համէթի և Օթելլոյի,  
որոց մէջ համանուն դիւցազանց գերե-  
րը ներկայացցց Պ. Ադամեան, առա-  
ջինը՝ գալլիացի լեզուաւ, երկրորդը՝  
հայ. ինչպէս առաջնոյն նոյնպէս և եր-  
կրորդին մէջ արժանաւոր անզիփացի  
մեծ հեղինակին գտայ ես զմեր հայ  
գերասանը, և ինձի հետ խիստ շատեր  
վկայեցին որ Պ. Ադամեան այդ գերե-  
րուն մէջ, ըստ ամենայնի հաւասար է  
եւրոպացի մեծ ահանճար գերասանից:  
Զարմանալին այն էր՝ որ գալլիացի լե-  
զուաւ Համէթի զերը ձևացընելուն մի-  
ջոց, շատեր ՚ի հանդիսականաց չէին  
հասկանալ, և այլ աւելի շատեր՝ երբ  
նա զիթելոյ հայ լեզուաւ ներկայացցց,  
սակայն և այնպէս բազմախուռան հան-  
դիսականք, գրիթէ բոլորովին աչք և ա-  
կանջ գարձած, սկեռեալ մոզք Ադա-  
մեանի վրայ կը նայէին, դէմքէն և վա-  
յելու ձեռքէն միտքը և սրտին զգաց-  
մունքը իմանալով: Բազմախուռան ծա-  
փահարութիւններ, ամէն կողմէ կանչ,  
աղաղակ, Ադամեան, Ադամեան, իւ-  
րաքանչիւր վարագոյրը փակուելուն,  
յայտնի կը վկայէին որ բոլը հանդի-  
սականք լիապէս գոհ են:

Բազմավիպիս ընթերցողաց շատին,  
կարծեմ, ծանօթ է Պ. Ադամեան, զի  
կ. Գոլսեցի է ծննդեամբ և հոն սկսած  
է իւր գերասանական արուեստը և ա-

պա 'ի թիվիս անցած, ուր գրագէտ ազգայնոց մօտ՝ մեծ յարգ ունի նորա թատերական տաղանդն. ոչ իրը նոր ինչ, այլ իրը պարտուց հատուցումն, այս տողերս գրողը կ'ուղղէ առ խմբադիր բազմավիպին որ իւր էջերուն մէջ, իրը ազգային ծանրակշիռ օրագիր, արժանաւոր տեղի մի չնորհէ, համառոտ կենսագրութեան և դրուատեաց թատերական հայ հանճարոյն:

Ծնած է Պ. Պետրոս Աղամեան 'ի կ. Գոլիս 1854ին, ոչ ունեոր ծնողաց զաւակ. Ղալաթիոյ Յիսուս-Փրկիչ եկեղեցւոյն ծխական զպրոցին մէջ, յաջողութեամբ աւարտած է տարրական ուսմանց ընթացքը. անտիական հասակէն չափազանց սէր ունեցել է ընթերցամիրութեան, և գեռ փոքր տղայ՝ մեր աշխարհիկ լեզուաւ գրուած զգիքը մեծաւ մասամբ կարդացած է: Որովհետեւ բոլոր գրեանքը դնելու կարողութիւն և դրամ պակսած է իրեն, նա աղաշաւոր ձևով մատեցած է առ ազգին գրագէտները, որ չնորհէն իրեն քանի մի օրուան այս ինչ կամայն գիրքը. խոստանալով՝ որ որոշեալ օրը ետ կը դարձընէ զիրքը՝ պահպէս մաքուր, ինչպէս որ ստացել է: Ո՞ր հայ գրապետին սիրտը առաջ կ'երթայ մերժել կամ չկատարել հայ աշխօյժ և ընթերցասէր փոքրիկ մանկան՝ այդպիսի օրինաւոր փափաքը: Պետրոսի ծնողը չունենալով միջոց գեռ ևս շարունակիլ նոր դաստիարակութիւնը, կ'որոշեն ըլլնա արուեստի տալ, որպէս զի ապահովեն նորա ապագայն, նախ՝ ժամացուցագործի, ապա ոսկերչի և յետոյ առեւտրական խանութ մի՛ իրբեւ նօտար. բայց Պետրիկի գեռութոյս, այլ 'ի բնէ ազատ հանճարն միշտ անտեղիստալի գտնուած է այդ ժառայական արուեստից դէմ: Բազմապատճիկ զրկումներ, առվ, քաղց, նոյն և ծեծ յանձն առած է, փախելով տերանց խանութներէն. ցորեկները անօթի՛ թատերց նստարանաց ներքեւ պահուըտելով, որպէս զի կարենայ գիշերները ներկայ գտնուիլ, կամ տեսնել ներկայացմունք

թատերաբեմին վրայ: Ըստ վկայութեան անձին՝ ամենափոքր հասակէն, կարգէ գուրս ձկուում մի ունեցել է Պ. Աղամեան որ և իցէ տեսակ ներկայացմանց: Վերջապէս յաջողել է Աղամեանի մօտենալ Պ. Սրապիոն Հէքիմեանի, որ ինչպէս գերասան, նոյն և թատերագէտ հեղինակ, անուանի էր նոյն միջոցին 'ի կ. Պօլիս: Պ. Հէքիմեանի առաջնորդութեամբ առաջին անդամ բերայի արևելեան թատեր բեմը կ'ել նէ Աղամեան: Թէպէտ և ինքը միտքը գրած՝ որ զարմանալի բաներ պիտի անէ, այլ ոչ ոք նորա վրայ ուշ կը գարձնէ. սակայն նա հաստատ միտքը կը դնէ որ անպատճառ գերասան լինի և սուիպէ զհանդիսատեսները՝ որ իրեն վրայ ուշ գարձնեն, և կը յաջողի: Մի տարի Տաճիկ զօրաց մէջ սպահի պաշտօն կը վարէ, և իւր աշխոյժ և մարդամօտի բնաւորութեամբ, մանաւանդ հաւասար հսյերենի՝ զիտնալով թուրքաց լեզուն, և զանազան թատերական ներկայացումներ տալով զօրաց մէջ, նոյն իսկ իրենց լեզուաւ, մեծամեծաց համակրութիւնը կը դրաւէ: Աղամեանի միտքը գրածը յաջողելուն՝ մեծապէս կը նպաստէ նոյն միջոցին մեծամեծ եւրոպացի գերասանաց 'ի Պօլիս գալն, ինչպէս Ռիսթոռիի, Առելոյիտայ և Օլորիչի: Աղամեանի ամէն հնարք կը բանեցընէ այդ գերասանաց բոլոր ներկայացուցմանց ներկայ գըտնուիլ, որոց ամենայն ձեռք, արարմունք, փոփոխութիւնք կերպարանաց և դիմաց, նոյն և ձայնից էլեւէք, իրբե 'ի հայելով՝ կը տպաւորին նորա վառվուուն երեւակայութեան վրայ, Զարմանալի՛ է յիրաւի, Պ. Աղամեանի կերպարանաց մի վայրկեանի մէջ կը առաջնազան այլայլութիւնքը. ուրախական և տրտմական կիրք, նախանձու և ատելութեան, սիրոյ և գգուանաց, երկիւղի և ցաւոց՝ ի վայրկեան ժամանակի զիրար կը յաջորդեն, աչք, յօնք, բերան, բոլոր գծագրութիւն դիմաց, համապատշաճ կրից սրտին, նոր տիպար նմա կ'ընծայեն, որոց վրայ աւել-

ցընելրպվ վայելվածեւ, և խիստ թատերական արուեստիւ կրթեալ դիրք և շարժուածք, գերասան հմտւ կը ներկայացրնեն զնա. որով և գիտունք արուեստին աննախանձ գովեցին զինքը, և պիտի գովեն միշտ:

1879ին արդէն իւր ընտրած արուեստին գաղտնեաց տիրացած, և վստահ իւր վրայ, կ'անցնի ցանկաստանէ 'ի Ռուսաստան, ազգայնոց դիմաց ներկայացումներ տալու. մեծ և բաց ասպարէզ կը գտնէ 'ի Թիֆլիս, ուր ազգիս մեծամասնութիւնը իսկոյն կը ճանչնան և կը յարգեն ազգային գերասանին հանճարը. քիչ ժամանակի մէջ Պ. Ադամեան ուսաներլվ Ռուսաց լեզուն, որ անհրաժեշտ է Ռուսաստանի մէջ շրջել ուղղող գերասանին համար, կը դիմէ 'ի մայրաքաղաքները, ուր ընդազգայնոց նաև Շունկը ներկայ գտնուելով նորա ներկայացմանց, կը ճանչնան 'ի նման մեծ թատերական տաղանդ և կը հրատարակեն մեծամեծ գովեստներ իրենց օրագրաց մէջ 'ի պատիւ հայ գերասանին Պ. Ադամեանի, ինչպէս կանխեցինք զրուցել:

Երկուհարիւրէն աւելի թատերական ներկայացմունք սոււած է Պ. Ադամեան Ռուսաստանի զանազան քաղաքաց մէջ հայ և գալիացի լեզուներով և ամէն խազի մէջ ստանձնած՝ մեծ և կարևոր գերը: Շեքսֆիրի Համելք, Օքելոյ և Լիր բազառոր խաղերուն մէջ համանուն դիւցազանց դերը. Պաւլո Ճիւպումէդիի Քաղաքական ման թատրերգութեան մէջ Քուատուոյի գերը. Պաւլո Ֆեռարի ասպետի Անյարգ սէր Կատակերգութեան մէջ Մոնթէ Սիլվայի գերը. Ավերանգը Դիւմայի գին թատերախազուն մէջ Կեանի գերը. Լերմոնթովի Դիմակահանդէս ողբերգու-

թեան մէջ Առափէնինի գերը. Շեկերի թատերց մէջ Ֆերգինանդոսի, Աշազակաց մէջ Ֆրանց Մօրի և երբեմն նորա եղբօր կարուսի գերերը. Տօն-կարզսի մէջ համանուն մեծ դերը. Նարգիս ողբերգութեան մէջ Նարգիսի գերը. Ռասինի թէրայիտի մէջ Համօնի գերը, և այլ շատ:

Պ. Ադամեան դեռ երիտասարդ է 33 տարուան. միջին հասակաւ, յլային և աշխոյդ կազմուածքով, և կրակոտ աշքերով. նորա խօսակցութիւնն զըւարթ է և լի կենդանի և վայելուչ ձերով, ինչպէս պատշաճաւոր է ընտիր գերասանի: Հայերէն նորա բարբառը նոր և յանող խառնուրդ մի է մեր երկու արևելեան և արևմտեան աշխարհաբառներուն, որ աւելի ներդաշնակ կը հնչէ նորա բերնէն, քանինչ որ են այդ բարբառները զատ զատ առնուած: Բաց 'ի գերասանութեան արուեստէն ունի Պ. Ադամեան քերթողութեան հանճար, որոյ ցոյց է՝ նորա 'ի մանկութեան գրած երգոց հատորիկն 'ի Թիֆլիզ տպեալ բաց յայսցանէ՝ նկարչութեան և դիմագրութեան ևս ունի հանճար ըստ վկայութեան մեծանուն հայ նկարչապետին Յովիշաննէս Աղայի Այվազեան. որոյ (Յովիշաննէս Աղայի) իւղաներկ պատկերը աստ 'ի թէոդոսիսիանկարեց քիչ օրուան մէջ Պ. Ադամեան և նուիրեց իրեն: Այժմ Պ. Գետրոս Ադամեան 'ի Թիֆլիս է և այս ձմեռ հոն պիտի տայ թատերական ներկայացմունք: Մեկ շատ գոհ միալով նորա ամսօրեայ բարեկամութենէն, 'ի սրուէ կը մաղթեմք նմա ամենայն յաջողութիւն, երեք տեսակ ևս ազատական արուեստից մէջ, 'ի փառս անձին և 'ի պարծանս հայ ազգիս: